Տեղեկանք

ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխվող հոդվածի

Հոդված 393. Ցեղասպանությունը

(վերնագիրը փոփ. 05.12.06 ՀՕ-256-Ն)

Ցեղասպանությունը, այսինքն՝ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով՝ այդ խմբի անդամներին սպանելը, նրանց առողջությանը ծանր վնաս պատճառելը, մանկածնությանը խոչընդոտելը, երեխաներին հարկադրաբար մարդկային այդ խմբից այլ խմբի հանձնելը, բռնությամբ վերաբնակեցնելը կամ այդ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելը՝

պատժվում են ազատազրկմամբ՝ տասնչորսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

(393-րդ հոդվածը փոփ. 05.12.06 ՀՕ-256-Ն, 23.05.11 ՀՕ-143-Ն)

Հոդված 393.1 Ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,

1. Ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը՝
պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասը տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է.
1) զանգվածային լրատվության միջոցներով կամ համակարգչային համակարգի միջոցով,
2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝
պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնչորս տարի ժամկետով:
3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝
1) կազմակերպված խմբի կողմից,
2) պաշտոնեական դիրքն օգտագործելով՝
պատժվում է ազատազրկմամբ տասնչորսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ: